

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՏԵՐՈՐԻ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը ըստ է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր քառիս 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայերի պանդխտութեան պատճառները մինչև
—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ թիւթաց
Հայաստանից. Գարիպի ցուցահանդիսի առիթով.
Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԱՌԱՍԳԻՐ-
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
Ազատամիտ կուսակցութիւն կաթօլիկ հայոց մէջ.

ՀԱՅԵՐԻ ՊԱՆԴԽՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻՅ ՄԻՆ

Թողնելով պատմական իրողութիւնը թէ
անցեալ դարերում հայերը, նոյն իսկ գիւ-
ղական դասակարգը, մեծ թւով դաղթում
էին հայրենիքից, մահմետական տիրապե-
տութեան ճնշումից ազատվելու համար,
քննենք թէ հայերի այժմեան պանդխտու-
թեան պատճառները ինչ են:

Մեր կարծիքով հայերի իրանց հայրենի
հողից անընդհատ դաղթելը ներկայ ժա-
մանակին, ունի իր բուն տնտեսական պատ-
ճառները:

Պանդխտութեան դաւադան վերջնորդ
մեղանում լինում է այժմ մեծ մասամբ
կամ անհող գիւղացիին, կամ վաճառականին
ու մանրավաճառը: Ամենից քիչ դաղթում
է, որ և է ուրիշ երկիր՝ հայ արհեստաւո-
րը:

Ինչ է այդ երեւոյթի պատճառը: Գիւ-
ղացու իր ծննդավայրից ուրիշ տեղ դաղթելու
ընթացքներում բանաւորութեամբ պա-
րապելու նպատակով, հետեանք է այն տըն-
տեսական անաշող հանգամանքի, որ մեր
գիւղական ազգաբնակչութիւնը շատ տեղե-
րում սաստիկ բազմացել է, իսկ նրա հո-
րերի քանակութիւնը նոյնն է մնացել: Աւ-
րեմի գլխով հողի պակասութիւն, մի և
նոյն ժամանակ ընկնելով պարտքերի տակ,
գիւղացին թողնում է իր նախնական պա-
րապմունքը և գնում է մեծ քաղաքներ,
այնտեղ կամ բեռնակրութեամբ, կամ բան-
ւորութեամբ, կամ մանրավաճառութեամբ

պարապելու, փոքր ինչ փող աշխատելու
գիտաւորութեամբ, յուսալով դրանով թէ
իր անձը թէ իր ընտանիքը պահպանելու,
գուցէ և իր պարտքերը վճարելու... Այդ
յոյսերը գրեթէ երբեք չեն իրագործվում
և հայ գիւղացին կամ կորչում է պանդխ-
տութեան մէջ, կամ վերադառնում է իր
ծննդավայրը առաջվայ պէս աղքատ, բացի
սրանից գուցէ և հիւանդ մի որ և է ան-
բուժելի ցաւով:

Երկրորդ դասակարգը, որի անդամները
ձգտում ունեն միշտ դաղթելու, պանդխ-
տութեան դիմելու, մեր մանր առեւտրա-
կանների դասակարգն է:

Ինչ է սրա պատճառը: Նախ քան բա-
ցատրիք պատճառները, պէտք է ներկա-
յացնենք ընթերցողին հետեւեալ պատկերը:
Երեւակայեցէք, որ դուք գնում էք օտար
երկրները ճանապարհորդելու: Դուք գալիս
էք այս ինչ օտար երկիր և սկսում էք
գիտել, ուսումնասիրել այնտեղի կենսը:
Դուք համոզվում էք, որ ամբողջ երկիրը
շատ աննշան բացառութեամբ բնակեցրած է
մի և նոյն ազգութեան պատկանող ներկա-
յացողիչներով: Նոյն ազգութեան, նոյն
ցեղին պատկանող մարդիկ ամեն տեսակ
հասարակական գործունէութիւն, ամեն
տեսակ պարապմունքներ են կատարում:
Դուք սկսում էք համեմատել այդ դու-
թիւնը մեր երկրի դրութեան հետ, և հա-
մոզվում էք, որ մեր երկրի դրութիւնը մի
շատ տարօրինակ դրութիւն է: Մեզ մօտ
հազար ու մի ազգութիւններ խառն ապ-
րում են երկրի մի և նոյն տարածութեան
վրա և այդ ազգութիւններից իւրաքան-
չիւրին յատուկ է մեզ մօտ մի յայտնի պա-
րապմունք, մի յայտնի գրադմունք, մի
յայտնի փէշակ միայն: Աննշան բացառու-
թիւնները մի կողմ թողնելով, մեծ մա-
սամբ մեր երկրի փէշակները բաժանվում
են ազգութիւններով: Հայը մեծ մա-
սամբ երկրագործ է, այնուհետև արհես-
տաւոր է (այն էլ մի քանի արհեստների
մէջ աշխույժիւն ունի), և վերջապէս վա-

ճառական ու մանրավաճառ է: Բայց հա-
զար ու մի ուրիշ պարապմունքներ կատա-
րելու պէս անմատչելի են հայերին: Ձիա-
վարները, կառապանները՝ մալականներ
կամ թուրքեր են. ծառաներ՝ վրացի կամ
ռուսներ են. քարտաշներ՝ յոյներ են. հաց-
թուխներ՝ վրացի, թուրքեր, կամ շատ
շատ հայ-կաթօլիկներ են. մանրավաճառներ
(օրինակ երեւանում) միմյանի թուրքեր են.
չբեղութեան առարկաներ պատրաստող
արհեստաւորներ՝ բոլորն էլ եւրոպացի են.
անային մանր, թէ և կոշտ նահապետական
կերպարանք ունեցող արհեստներով պարա-
պմունքը մեծ մասամբ վրացի, թուրքեր
և մեր լեռնաբնակ ցեղերն են և այլն:

Այդպիսով փէշակներից շատերը անմատ-
չելի են մեր երկրի հայոց ազգաբնակչու-
թեան և մի պարապմունքից, մի գրադմուն-
քից, մի փէշակից դէպքի միւսն անցնելը
անհնարին է լինում մեր երկրում:

Երբ հայ հողագործը, հողի պակասու-
թեան պատճառով, կամ գիւղատնտեսա-
կան որ և է անաշող հանգամանքի պատ-
ճառով, անկարող է լինում իր անձը
և իր ընտանիքը իր սովորական պարապ-
մունքով կերակրելու, ապրելու, — նա
անկարող է լինում կամ անային մանր ար-
հեստներով իրենց պատրաստելով, կամ
գիւղատնտեսական մի նոր ձեւով օգնու-
թեամբ իր ներկայիս միջոցների պակասը
լրացնել և պէտք է դաղթէ ուրիշ տեղ
հասարակ մշակ, բեռնակիր, բանւոր դառ-
նալու համար: Երբ նահապետական ար-
հեստներով պարապող մի հայ արհեստա-
ւոր անկարող է լինում գերմանացի կամ
ռուս արհեստաւորի դէմ մրցելու, մի-
ջոց չունենալով առաջադիմելու և կա-
տարելադրովելու, — նա ստիպված է դաղ-
թել ուրիշ երկիր: Երբ հայ վաճառա-
կանը իր գործերի մէջ առաջվայ աշխու-
թիւնը այլ ևս չունի, նա անընդունակ է
լինում թողնել իր առաջվայ պարապմունքը
և ձեռնամուկ լինել դիցուք մի որ և լայն,
ընդարձակ տնտեսութեան կամ գործարա-

նական ձեռնարկութեան, — և նա դաղ-
թում է ուրիշ երկիր: Երբ հայ մանրավա-
ճառին այլ ևս չէ աշխույժում իր գործը
շարունակել և նա սկսում է իր պարապ-
մունքի մէջ վնաս կրել, նա ձեռք չէ տալիս
մի որ և է արհեստին, կամ փէշակին, —
այլ թողնում է երկիրը և գնում, գաղ-
թում է, դիցուք, Անդրկասպեան երկիրը,
այնտեղ մանրավաճառութեամբ պարապե-
լու:

Այդպիսով մեր երկրի հայերի մէջ չը
կայ սովորութիւն մի պարապմունքից, մի
գրադմունքից դէպքի միւսն անցնելը: Մենք
այն մտքին ենք ընտելացել, որ հայերին
մատչելի կարող է լինել պարապմունքների
մի յայտնի, նեղ, սահմանափակ շրջան
միայն, և մենք չենք որոնում մեզ համար
բազմատեսակ հասարակական գրադմունք-
ներ, պարապմունքների այլ ձեւեր... Եւ
երբ մի բանում չենք աշխույժում, փոխանակ
նոյն շրջանում այլ գործ որոնելու, այլ փե-
շակին, այլ գրադմունքին ձեռնամուկ լի-
նելու, — անմիջապէս ստիպված ենք փոխել
շրջանը, մի այլ շրջանում, որտեղ կարծում
ենք թէ մրցութիւնը այնքան մեծ չէ՝ ա-
ռաջվայ պարապմունքը շարունակելու հա-
մար:

Եւ դրանից ծագում է այն անմիջական ե-
րեւոյթը որ հայը միշտ դաղթում է ու
դաղթում, երբեք վայր չէ գնում իր պան-
դխտութեան դաւադանը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս Կ. Պոլսում լոյս տեսաւ Պօլսի
«Ազգային հիւանդանոցի յիշամնայ պատմու-
թիւնը», որ բաւական մանրամասնաբար և բաւա-
կան հետաքրքիր տեղեկութիւններով կազմել է պ.
Բիւզանդ ֆէշեան, և «Տեղեկագիր հոգաբարձու-

բոլոր պարագաները, նոցա բոլոր գործողութիւն-
ները, միջոցները, վասն զի ունեցան իրանց
թոյլ կողմերը և մեծապէս Որքան և համակրեմ
նոցա սկզբունքին, profession de foi-ին, բայց
խոստովանում ենք, որ այս սկզբունքը, այս դա-
ւանութիւնը նոցա կողմից շատ թոյլ կերպով
ճշդութեան և գործադրելեան, — նոքա չունեցան
հաստատ հող իրանց ողորդի տակ, շատերը մաս-
նաւոր, նեղ, նրվական հաշիւներից դրդուած
գործեցին, և շատ քիչերը միայն կարողացան
կրել այդ ընթացքի բոլոր ծանրութիւնը և հաւա-
տարի մնացին իրանց բարոյած դաւանութեան
Այսու ամենայնիւ կուսակցութեան ծագումն և
ամբողջ 18 տարի տևողութիւնն ևս նշանաւոր
երևոյթ է:

Գիտենք այժմ թէ ինչ վախճան ունեցաւ հա-
կահասունեանց խումբը: Գործի գլուխ կանգնած
անձերից ոմանք (մեծագոյն մասը) «յերկուս-
ցան» և ճանապարհի կէսից ետ դարձան նախ-
կին գաւթի, ոմանք (փոքրագոյն մասը) դիմեցին
լուսաւորչական եկեղեցու գիրկն և ոմանք էլ
մնացին մինչև հիմա և պատուաւոր կերպով դաշն
կուցին այն մարմնոյ հետ, որից անջատած էին
երեք կերպ վախճան, ուրեմն և մենք այս երեքից
հակված ենք ընտրելագոյն համարելու վերջնութիւնը:
Մենք շատ լաւ գիտենք, զգում ենք, որ այս
կերպով մեզ հակառակ ունենք թէ կաթօլիկ-
ն երկին և թէ լուսաւորչականն երկին
միանգամայն, կաթօլիկն երկին վասն զի սո-
քա լաւագոյն կը համարէին անշուշտ, որ ոչ այդ
հերձուածը գոյութիւն ունենար և ոչ էլ հետևա-
բար վերստին միութիւնն — այն էլ գիջողութիւն-
ներով իրենց կողմից, և լուսաւորչականն
ն երկին — որովհետեւ սոքա ևս կը բաղձային՝ բնա-
կանաբար, որ հակահասունեաները ոչ թէ մա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶԱՏԱՄԻՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԱԹՕԼԻԿ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Հակահասունեանք, կամ ինչպէս իրանք իրանց
անուանում էին, «Արեւեան կաթօլիկաց»
կուսակցութիւնը դարաբեց գոյութիւն ունենա-
լուց, ամբողջ 18 տարի անընդհատ մաքաւելուց
յետոյ այն մարմնոյ հետ, որից անջատած էր
նա: Միութիւնը կայացաւ Ջատիկի տօներէն: Տաճ-
կատանի կաթօլիկ հայոց կաթողիկոս և պատ-
րիարք Աղաբեան՝ արդէն հանդիսաւոր պատարագ
մատոյց Ջատիկի Ա. օրը՝ հակահասունեանց ձեռքն
եղած Յովնան 5000 ժողովուրդ: Բացի կրօնական
գործոց տեսուչ Ջիվեր Բէյից, որ անձամբ է բե-
րել միութեան վերաբերեալ կայսերական իրադէս,
մեծ բազմութիւն այլ և այլ կրօնի, դասակարգի
և ազգութեանց պատկանող անձերի, ի միջի ո-
րոց և յունաց պատրիարքը շնորհաւորել են Գ.
Աղաբեան պատրիարքին իր յաջողութեան հա-
մար: Կ. Պօլսոյ պատրիարքարանի դահլիճում
հաւաքված հայ-կաթօլիկները առժամանակեայ
վարչական ժողովում, Աղաբեան պատրիարքի
նախագահութեան և Տիգրան Սարգիս Բէյի
(նախկին հակահասունեանց պարագլուխ) ատենա-
պետութեան ներքե, կարգուած է մի յանձնաժո-
ղով՝ հարկ եղած վարչական կանոնադրութիւնը

կազմելու համար: *) Այս ժողովը բացած ժամա-
նակ՝ Գերեթը. Աղաբեան մի ընդարձակ ճառ
է խօսում, որի մէջ յորդորում է յործել «հեռի»
որ և է կրօնական կամ քաղաքագիտա-
կան խնդրոյ յուզմանէ... հեռի որ և է
օտար կամ ծայրահեղ ձգտումներէ...
և իբրեւ ազգայ վարչութեան դրոշմ՝ առաջար-
կում է հետեւալ դէվիզը՝ «Ազգաւ հայ, կրօ-
նիւ կաթօլիկ է, հպատակութիւն և համար,
հասարակութեամբ, քաղաքականութե-
ամբ օսման ենք», որոնք առհասարակ
դէշ չեն հնչում...

Թէ ինչ կերպ կանոնադրութիւն ծրագրում է
կազմել յիշեալ կարեւոր յանձնաժողովը, որ բաղ-
կացած է կարող անձերից, լրագրութեան յայտնի
չէ դեռ: Իր ժամանակին մենք առիթ կունենանք
խօսել յանձնաժողովի արդեանց մասին, բայց այ-
ժմ մենք ընթերցողի ուշադրութիւնն ենք հրա-
ւիրում այս առթիւ մի կարեւոր հարցի վրա:
Թէ ինչ էր, ինչպէս դրդացաւ և ինչ հիմանց
վրա՝ հակահասունեան կուսակցութիւնը՝ մենք
յայտնել ենք արդէն «Մշակի» ընթերցողներին
(տես մեր յօդուածը՝ «Տաճկատանի կաթօլիկ հա-
յոց կաթողիկոսական» — պատրիարքական աթոռը):
Եւ որովհետեւ նա այլ ևս պատմութեան սեփա-
կանութիւն է դարձած, ուստի հարկ ենք համա-
րում մի ընդհանուր հայեացք ձգել այն կուսակ-
ցութեան գործունէութեան, դիտման և վախճա-
նին վրա:

*) Այս յանձնաժողովը բաղկացած է 8 հոգուց,
որոնք են Միքայէլ Էֆ. Փորթուզաբեան (ֆինանս-
ների միջխտորի օգնական), Յովհաննէս Էֆ. Սա-
գրեբեան, Արիստակէս Էֆ. Աղաբեան, Պետրոս Էֆ.
Գուլումճեան, Սարգիս Բէյ Տիգրան, Դօկտ. Նու-
րիջան Էֆ. Միքայէլ Էֆ., Հէրիման, Վիլչէն Էֆ.
Գասպալեան:

Կանուխ չէ կարծեմ որոշակի յայտնել թէ հա-
կահասունեաների պաշտպանած դատն արդար
էր: Հակահասունեան կուսակցութիւնը մի մարմ-
նացած բողոք էր ընդդէմ հռչակաւոր Հասունեա-
նի և համախօսից փառասիրական՝ հակադպիսի
ձգտմանց և դիտմանց: Չենք ընկնում մենք դեռ
թէ այդ դիտմանը ինքնաբերական էին թէ աւելի
բարձր կենտրոնից ծնունդ և իրավոյց առած:
Հասունեան՝ ճիշդ է, դրսից աւելցրեց Կ. Պօլսոյ
հայ-կաթօլիկ հասարակութեան փայլն, ազդեցու-
թիւնն և կարեւոր դիրքի մէջ դրաւ նրան, բայց
ներքնապէս խախտեց նորա հասարակական ժո-
ղովրդական կազմակերպութիւնը, ուշադրութիւն
չը դարձրեց ժամանակի պահանջին համեմատ
դարձացող դադափարների վրա և աշխատեց խեղ-
ղել այն ամեն շարժումներ, որոնք ծնվում էին
բնական օրէնքով, ի պաշտպանութիւն այն կաղ-
մակերպութեան և այն դադափարների՝ Հետեանց
յայտնի է: Այնտեղ, ուր գրկանք է կրում ժողո-
վրդական դարեւոր իրաւունքը, ուր կրօնի բացար-
ձակ գերիշխանութեան պատրուակով ամենայն
համադրային դրացմունք իր սերմանց մէջ է
խեղդվում, ուր ժամանակի պահանջած ազատա-
կան, առաջադիմական ոգին հարկադրված է լի-
նում՝ միշտ տեղի տալ եսական, սահմանափակ,
յետադիմական փոռ դադափարներով առաջ-
նորված վարչութեան առաջ, — այնտեղ, որովհե-
տեւ, բնականաբար կը ծնին դժգոհներ, կը դոյա-
նայ ընդդիմադրական կուսակցութիւն, — կը ձեռ-
նայ հերձուած՝ առաջինին հակառակ մտքերով
տոգորված, որ բուռն ճիգերով կաշխատէ հակա-
ռակ մղում տալ իրաց այն ընթացքին: Այդպիսի
մի կուսակցութիւն էր ահա հակահասունեանց
խումբը՝ դէթ սկզբունքով: Մենք չենք ար-
դարացնում հակահասունեանց գործունէութեան

թեան ազգային հիւանդանոցի» 1883—1886 թվականի վերաբերեալ, որը հոգաբարձութիւնը իր ժամանակին ըստ սովորութեան ներկայացրած է եղել ըստաբանական ժողովի նախագահին՝ պատ-
րիարքին:

Մեզ հաղորդում են, որ դերասան պ. Աղա-
ման, մի քանի ժամանակ Մոսկվայում մնալուց,
և գուցէ Պետերբուրգ գնալուց յետոյ, պէտք է
ուղևորվի Կ. Պոլիս, որտեղից նա գուցէ կանցնի
Եւրոպա, մի քանի նշանաւոր քաղաքներում ներ-
կայացումներ տալու նպատակով:

Մայիսի 21-ին Ներսիսեան դպրոցի վերջնական
դաստանն աշակերտները քննութիւն տուելուն
Ֆիզիկայից ինչպէս մեզ հաղորդեցին, այդ զեպ-
րոցում Ֆիզիկայի դասերը քիչ չեն, և ծրագիրն
էլ բաւական մեծ է, համարեա թէ նոյնը, ինչ և
պետական միջնակարգ դպրոցներում: Հարցա-
քննութեան ժամանակ աշակերտներին մեծ մասը
բաւական աջող էին Մայիսի դասագրքից այս
կամ այն կտորը պատմելու մէջ, Ֆիզիկայի դա-
նադան մասերից: Բայց մի բան շատ աչքի էր
ընկնում. երևում է որ այդ աւարկայի դասա-
տուութիւնը համարեա թէ չէ կապւած փորձերի և
գործնական բացատրութիւնների հետ, և ունին-
դիրը ակամայ այն եզրակացութեանն է դալիս,
որ աշակերտները իրանց պատմած թէօրիմները
միայն իբրև թէօրիմ են հասկանում, և շատ
չուարժում են, երբ իրանց պատմած այս կամ
այն Ֆիզիկական օրէնքը ստիպւած են լինում
պարզաբանել նոյն իսկ իրանց առաջ դրած մի
որ և է գործիքի վրա Յայտնի իրողութիւն է, որ
առհասարակ մեր դպրոցներում բնական գիտու-
թիւնները այնքան էլ չեն հաւածւած, որքան նը-
բանը ենթարկւած են վերացական եղանակի
դաստաւութեան. մեր դպրոցների բնագիտութեան
ուսուցիչները առանց փորձերի և առանց գործ-
նական ապացոյցների դիմելու՝ բնական գիտու-
թիւնները աւանդում են համարեա ինչպէս պատ-
մութիւն: Պատմում են, որ Ներսիսեան դպրոցի
Ֆիզիկական կարիքները գործիքները շատ անգամ
ծածկւում են փոշու հաստ շերտով, որովհետեւ
նրանց գործադրութեան մասին շատ քիչ են
մտածում: Հասկանալի է ուրեմն. թէ ինչու այն
աշակերտը, որ նոյն իսկ շատ աջող կերպով
պատմում է Ֆիզիկայի այս կամ այն երևոյթը և
այս կամ այն օրէնքը, շատ քիչ նմանութիւն է
գտնում իր սովորածի և իրականի մէջ: Անկաս-
կած մեր մանկավարժներին յայտնի է, որ Ֆիզի-
կայի նպատակը չէ վերացական թէօրիմներ և
օրէնքներ հաղորդել աշակերտներին:

սամբ միայն, այլ ամբողջապէս միանային իրանց
և չը վերադառնային կաթոլիկ եկեղեցու գիրկը:
Յայց տալու համար թէ աղգային յառաջադիմու-
թեան տեսակէտով այդ երկու կողմն էլ արդիւ-
նաւոր և օգտակար բաղձանք չեն տաճում, մենք
պարզում ենք ստորև հետեւալ նկատողութիւնը:
Անկարելի է չը խոստովանել, որ մեր հասա-
րակութեանց, այսինքն կաթոլիկ հայերիս մէջ,
ընդհանրապէս, կրօնական հայեացք անհամեմատ
աւելի իշխող է քան ազգայնութեան զգացմունքը,
և այդ գերազանցող շատ անգամ գործիք, պա-
տուակ է լինում հոգեւորականութեան ձեռքում,
—գիտակցաբար կամ անզգապէս,—բոլորովին
կողմնակի նպատակներ յառաջանելուն և օտար
տարրերի ազդեցութեան դարգանալուն. անուրա-
նայի է նոյնպէս, որ որքան և մեղմացած լինի,
բայց կայ միշտ գաղղնական և անտարբերութիւն
դէպի այն ամեն գործ, որ ընդհանուր հայութեան
է վերաբերում, դէպի ամեն պարագայ, որտեղ
համարալի, համազգային գործակցութիւն է պա-
հանջւում, դէպի ամեն աղգային ստացուածք, նիւ-
թական կամ վերացական, որոնք դարաւոր արժո-
ղութեամբ նուիրականացած են, և սեփական
աղգային ինքնաճանաչութեան ոգին զեռ շատ
հեռու է սաւառնում մեղանից, յայտնի է վերջա-
պէս թէ հայ-կաթոլիկ հասարակութիւնը զեռ չէ
գտնւում այն վիճակի մէջ, որ բաղձալի էր աղ-
գին բարոյական վերակենդանութեան մեծ գործի
համար:

Ինչ դիրք պիտի բռնեն ուրեմն այն հայ-կաթո-
լիկները, որոնք կատարելապէս ըմբռնում են մեր
վերև նկարագրած վիճակը, այդ դրութեան բոլոր
վտանգ և լաւ կողմերը թողնել իր հասարակու-
թիւնն և լուսաւորչականութիւն ընդունել—թու-
լութիւն և փոքրորդութիւն է. մնալ կաթոլիկ և

ԵՐԵՎԱՆԻՅ մեզ հաղորդում են «Վերջին շաբաթ»
ները մեզանում եկած յորդ անձրեւների հետեան-
քնն այն եղաւ, որ ինչպէս հաղորդում են Երեւա-
նի նահանգի բազմաթիւ գիւղերից, արտերը շատ
տեղ կատարելապէս հեղեղվել են և ցանքերն էլ
շատ տեղ իսպառ փչացել են:

«С. Петерб. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ
պետական կալուածների միւնիստրութիւնը նշա-
նակել է վարձատրութիւն, պարգևներ և չքա-
ղարաններ այն կալուածատերերին, որոնք եւրոպա-
նական Ռուսաստանի այլ և այլ նահանգներում կը
նպաստեն անտառների զարգացման: Միւնիստրու-
թեան ուղարկութիւնը զլուստրապէս դարձրած
է՝ Պէնզէնեան, Տալրիկեան, Բեսարաբեան, Խէր-
սոնեան, Կիէվեան, Պոդոլեան, Սարատովեան,
Սամարեան և այլ նահանգների վրա:

ԲԱԹՈՒՄԻՅ մեզ հաղորդում են հետեւեալ զեթ-
աղորդութեան մասին: «Ղուռ գաւառից առե-
տուր անելու նպատակով մեր կողմերն եկած մի
հայ երիտասարդ այս օրերս գնում է իր ընկեր-
ների հետ ծովի մէջ լողանալու, բայց չը նայելով
թէ ծովը հանդարտ էր, երիտասարդը լողանալիս
խեղդւում է: Ընկերները անկարող են լինում նը-
բան աղատել, քանի որ իրանք էլ սաստիկ յոգ-
նած լինելով, հալու կարողանում են աղատվել
խեղդվելուց և կիսամեռ դրութեան մէջ ափերին
հասնել: Միւս օրը խեղդվածի դիակը ափի վրա
ընկած գտնուեցաւ Ասում են, որ խեղդվածը լո-
ղանալուց առաջ ունէր իր զրկանում մօտ 600
րուբլի, սակայն ողորմելու չորերում գտնվեցաւ
միմիայն 40 ր. 50 կօպ. դոմարը:

ՇՈՒՆԱՎԵՐԻՅ մեզ հաղորդում են, որ մի ամ-
սից ի վեր այդ գիւղում տարածւած են՝ թէ հազ
և թէ կարմրուկ հիւանդութիւններ, որոնք կոտո-
րած են անում գիւղի մանուկների շրջանում:
Այդ հիւանդութիւնները չեն խնայում և հասա-
կաւորներին: Գիւղի իրական նորակիցը դպրոցի
մի երեք աշակերտներին էլ զոհվեցան կարմ-
րուկ հիւանդութեան:

Տեղական ուսու լրագիրները հաղորդում են, որ
հանձնակի քաղական դպրոցի ուսուցիչ Տէր-Մի-
քայէլեան, որ վերջին ժամանակ բնակւում էր
Թիֆլիսի «Վենետիկ» հիւանդոցում, մայիսի 22-ին
անձնասպանութիւն գործեց այդ հիւանդոցի սե-
նակներից միւսում:

«Русский Курьеръ» լրագրի № 136-ի մէջ

անտարբեր կերպով դիտել, մանաւանդ համակեր-
պիլ այդ վիճակին,—հակառակ է ազատամիտ, դի-
տակցական ոգու և բարոյական արժանաւորու-
թեան: Այս է ահա խնդրի հոգին: Եւ մենք կար-
ծում ենք թէ ոչ այս և ոչ այն: Այլ նորա պէտք
է կազմին մի առանձին խումբ, պէտք է ձեռա-
նեն մի ազատ միտ ընդդիմադրական
կուսակցութիւն, տիրող հոգեւոր կառավա-
րութեան վարչական մարմինն ամեն մի սխալ
ըստի և յետագիտական վարմունքը քննադատելու,
հայ-կաթոլիկ ամբողջ նրանցից զգուշացնելու և
այդօրինակ վնասակար ձեռնարկութեանց իրա-
գործման արգելք լինելու համար: Ազատամիտ
կուսակցութիւնը պէտք է պաշտպանէ, տարածէ
ժողովրդի մէջ յառաջադիմական գաղափարներ,
մաքաւի իր հասարակութեան այն ամեն հաստա-
տութեանց և անձանց դէմ, որոնք բանիւ և
գործով, միջնադարեան, հակազգային և կրօնա-
մոլ ուղղութեան են առաջնորդում ժողովրդին,
անբարոյականացնում են (démoraliser) նրան: Դա
պէտք է օրինակ տալ, թէ կաթոլիկ մնալով էլ
հայը ըմբռնում է և դիտէ կատարել իր պարտա-
ւորութիւնները առաջի ազգութեան, պէտք է
բացատրել թէ հոռմական եկեղեցին ոչ երբեք կը
պահանջէ և ոչ էլ կարող է պահանջել, որ ի մա-
սին հաւատալից ընդհանուր կաթոլիկ եկեղեցու
մասն կազմող արեւելեան եկեղեցիք, թողնեն իրանց
ազգային, եկեղեցական կարգերն, ծիսակատարու-
թիւններն և աւանդութիւնները, ցորձալի այդպի-
սիք հաւատոյ մասանց վերաբերութիւն չունեն և
ընդունին լատինականները: Օրինակի համար, ժո-
ղովրդական, ընտրողական սկզբունքը Հայաստա-
նայց եկեղեցուց կազմութեան հիմնական տարր-
ներից մինն է, հայ ժողովուրդն ընտելացած է
այդ կարգին, մանաւանդ թէ սնած է այդ ոգով:

տղկեցաւ մի շատ համակրական թղթակցութիւն
Վաղարշապատից հանդուցեալ Բաֆֆի մասին:
Թղթակիցը խօսում է Բաֆֆիի նշանակութեան
մասին, որպէս գրողի, և վերջը նկարագրում է
նրա թաղման հանդէսը:

Մեզ գրում են Եւրալէրից հետեւեալը: «Այս
օրերս Եւրալէր գիւղում սպանեցին յայտնի
բաջ հայ երիտասարդ կարօյին: Հանդուցեալ այն
երիտասարդն է, որ մի քանի ժամանակ սրանից
առաջ փախցրեց մի թուրք աղջկան, միտել տը-
ւեց նրան ու պատկվեց նրա հետ: Այժմ դատաս-
տանական քննութիւնից երեսց, որ կարօյին
սպանողը մի ինչ որ թշնամութիւն ունէր հան-
դուցեալի դէմ: Չարագործը բանտարկւած է Եւ-
րալէրում»:

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը: «Կիրա-
կի, մայիսի 29-ին, Թիֆլիսի Ս. Նշան եկեղեցու
ծխական դպրոցում լինում է տարեկան հաշի-
ւութիւն և աւարտող աշակերտների պարգեա-
բաշխութիւն: Դպրոցի վարչութիւնը խնդրում է
ցանկացողներին հնոր՝ բերել յիշեալ դպրոցը կի-
րակի օր, առաւօտեան 11 ժամին»:

Անդրկովկասեան շերամագանական շրջանե-
րից ստացած մեր նամակները ցոյց են տալիս,
որ շուտով բօժօթ ազաւը կը սկսվի, և որ
առհասարակ շերամի բերքը այս տարի շատ տեղ
աջող չէ, զլուստրապէս անձրեային և ցուրտ ե-
ղանակների պատճառով:

ՆՈՐ-ԲԱՅԱՆՔԻՅ մեզ հաղորդում են, որ այնտեղ
մտադրութիւն կայ հանգանակութիւն բանալու
յօդուտ Բաֆֆիի արձանի: Գրա հետ միասին մեր
թղթակիցը յայտնում է, որ այնտեղի ընթերցող
հասարակութիւնը շատ ցաւում է, որ ոչ տեղե-
կութիւն ստանալու պատճառով անկարող եղաւ
իր կողմից ևս պսակ դնելու հանդուցեալ գրողի
դագաղի վրա:

Ինչպէս երևում է արտասահմանի հայոց մի
լրագրի ստացած տեղեկութիւններից, լօնդոնում
հայերը հոգեհանգիստ են կատարել հանգուցեալ
Բաֆֆիի յիշատակին:

Երկուշաբթի օր, կալուածական բանկի թատրո-
նում նշանակւած էր վրացերէն «Կարամաշիւանի»
ֆէլիերայի ներկայացումը. մեծ հասարակութիւն
էր հաւաքվել և թատրոնը լի էր, դերասանական
խումբը ողնորված սկսեց իր խաղը, բայց նոր
էր վարագոյրը բարձրացել, երբ յանկարծ ամբողջ

և նա ինչ դաւանութեան որ պատկանի, լուսա-
ւորչական, աւետարանական կամ կաթոլիկ, նա
հակամէտ չէ բաժնելու. այդ կարգից: Ռէպրեսու-
րուց տապալել հարուած էր տալիս այս կարևոր
աւանդութեան և պատճառեց հիմնական տարա-
ձայնութիւն. հայ-կաթոլիկ եկեղեցուց մէջ ձեռա-
ցաւ դժգոհների խումբ և կազմվեցաւ հակահա-
ստեան կուսակցութիւն, որ ոչինչ խնայեց այդ
նոր բէթովի դէմ մաքաւելու համար: Ահա այս և
նմանօրինակ սկզբունք և կարգերը ուժգին պէտք
է պաշտպանէ ազատ միտ կուսակցութեան
թիւնը: Այսպիսի մի կուսակցութեան կազմու-
թիւնն մեծապէս կարևոր և յաջողութիւնն ապա-
հով է նրանից, որ ժամանակի յառաջացմամբ
այս գաղափարները հետզհետէ աւելի տարած-
վում և հաստատուն դիրք են գրաւում Կ. Պոլսոյ
հայ-կաթոլիկ հասարակութեան մէջ: Բայց ինչ օ-
գուտ է տալիս համեմատաբար այն «անձնա-
ն ու էր-ազգասէրը», որ չյօդուտ ազդին լաւա-
դոյն ծառայելու մտքը լքանում է իր բանակը,
իր հասարակութիւնը և մտնելով լուսաւորչական
եկեղեցուց դիրքը, հանդեսանում Այս կերպ վար-
մունքն, ի հարկէ, ձեռնուտ է այնպիսիներին,—
մանաւանդ հոգեւորականներին—համար, որոնք կա-
րևոր պաշտօններ ստանձնելու—եպիսկոպոսական
աստիճան աւանդու և առաջնորդական աթոռ
ձեռք բերելու—յոյսն ունեն և յաջողում են...
Եւ ինչ արդեօք յառաջ են բերած կամ կը բե-
րեն դրա իրենց տեղափոխութեամբը, հաւատա-
ցեք, որ կամ բնաւ, կամ շատ սակաւ: Դրանց այլ ևս
չունեն ազդեցութիւն կաթոլիկ հայոց մօտ, այս
վերջինները խառնում են նրանցից և վերջ ի վեր-
ջոյ այն է դուրս գալիս, որ մի և նոյն անձինք,
որոնք բռնա ազատամիտ, յառաջադէմ էին կա-
թոլիկ դաւանութեան պատկանած ժամանակ,—

թատրոնը միմեզ Բանից երեսց, որ էլէկտրական
լուսաւորութեան մեքենան փչացել է, այնպէս որ
ստիպվեցան խաղը յետաձգել, և հասարակութիւ-
նը բաւական տրուելը բարձրացնելուց յետոյ
թատրոնից հեռացաւ:

Այս օրերս Թիֆլիսում լոյս տեսաւ մի բաւա-
կան մեծ և պատկերազարդ գիրք «Путеводитель
по Кавказу» (Ուղեցոյց Կովկասի համար), որը
կազմել է պ. Ե. Վէյդենբաում, կովկասեան
կառավարչապետ իշխան Դոնդուկով-Կորսակովի
յանձնարարութեամբ: Գրքի նպատակն է միջոց
տալ կովկասում ճանապարհորդներին հեշտու-
թեամբ ծանօթանալու այդ երկրի թէ ընդհանուր
գրութեան և թէ զլուստր տեղերի հետ: Գիրքը
բաղկացած է երկու մասից. առաջին մասը պա-
րունակում է ընդհանուր տեսութիւն—սահման-
ները, տարածութիւնը, բոյսերը, կլիման, ջրերը,
վարչական բաժանմունքները, ազգաբնակչութիւնը
և այլն. իսկ երկրորդ մասը պարունակում է Կով-
կասի նշանաւոր տեղերի և քաղաքների նկարա-
գրութիւններ: Այդ աշխատութիւնը իբրև առաջին
փորձ իր տեսակի մէջ, ի հարկէ կարող է ունե-
նալ և ունի էլ պակասութիւններ և սխալներ,
բայց այնու ամենայնիւ արժանի է ուղարկութեան
և կարող է ծառայել իր նպատակին՝ պարունա-
կելով իր մէջ կովկասի վերաբերեալ ամփոփ տե-
ղեկութիւններ:

Կենտրոնական զրաւաճառանոցի հրատարա-
կութեամբ լոյս տեսաւ պ. Ղ. Աղայանի յօրի-
նած դասագիրքը՝ «Ուսումն մարդկին լեզուի»
երկրորդ տարւոյ համար: Գրքի մէջ զլուստրա-
պէս զետեղւած են պ. Աղայանի արձակ և ո-
տանաւոր գրութիւնները,—մեծ մասամբ բաւական
աջող,—մարդկին լեզուի երկրորդ տարւոյ դասա-
տուութեան համար, բայց դոցա հետ միասին
կան և մի քանի ուրիշ անձանց դանազան ոտա-
նաւոր և արձակ գրութիւններ, որոնք արտասոված
են այդ դասագրքում: Գրքին իբրև կաւելում
կցած է պ. Աղայանի «Արեգնազան» յաւելուած
խորագրական աշխատք՝ գրութեան, իբրև նիւթ մա-
նուկների ինքնուրոյն ընթերցանութեան համար:
Թէ որքան յարմար է «Արեգնազանը», այդ ինքն
ըստ ինքեան գեղեցիկ գրութեան, երկրորդ տար-
ւոյ մանուկների ինքնուրոյն և ազատ ընթերցա-
նութեան համար, այդ կը ցոյց տայ մեր դպրոց-
ների վարժապետներին, ի հարկէ, փորձը Բայց
հետեւանք աջող լինելը մի փոքր կասկածելի է:

Թիֆլիսի նահանգի աղնականների նահանգա-
կան առաջնորդ ընտրվեցաւ իշխան Ի. Բաղրա-

դառնում են յետին աստիճանի մոլեռանդ, խա-
ւարամիտ և յետադիմական ընդունելով լուսաւոր-
չական դաւանութիւնը, և աւելի խիտ են հալա-
ծում և ատում կաթոլիկ կամ աւետարանական
հայերին, քան թէ ի ծնէ լուսաւորչականները *):
Պարզ խնդիր է ուրեմն, որ ազատամիտ տարրը
հայ-կաթոլիկ ժողովրդեան մէջ ոչ թէ միայն
պէտք չէ լքանէ իր հասարակութիւնը, այլ աւելի
սերտ կերպով կապի նորա հետ, աւելի մօտից
ճանաչէ և ամբէ նորա հասարակական կազմա-
կերպութեան բաղադրիմը վերքերը, տեղը և վնա-
սակար կողմերը, ջանալ հակառակ ծանրութիւն
կազմել կշռի միւս նօթարի մէջ, արգիլէ յետադի-
մական շարժման, հնացեալ գաղափարների ըն-
դարձակման և առողջ թաքմ, ժամանակակից
մաքեթու քարոզող հանդիսանալ: Եւ նորա իրա-
կան արդիւնք կարտադրեն, վրան դի պապական
նոցա կողմն է:

Ինչ որ մենք այս յօդուածում ասացինք կաթո-
լիկ հայերի մասին, նոյնը փոքր դանազանու-
թեամբ կարելի է վերաբերել նաև հայ-աւետարա-
նական հասարակութեան:

Այո, ազատամիտ և յառաջադիմաւոր հայ-կա-
թոլիկն ու հայ-աւետարանականը պէտք է գոր-
ծեն իւրաքանչիւրին իր հասարակութեան մէջ, իր
չըմբռնում, ուր կայ բաւական հող մշակելու: Մեր
հանձնարող միպասանն առանց ու և դիտման չէ
ստեղծել Ար փի ա ր ի և Զ ա լ լ ա գ ի գերբեր...:

Ա. Սարգսյանեանց

*) Այս առթիւ աւելորդ չէ յիշատակել տաճ-
կական ծանօթ առաժը՝ «Հարաբարան դէօնէն
սիբընէ, ըէսկիւն օղուր», զինու. քաջախիւ բարկ
է լինում...:

տիտան-Մուխրանսկի Բուխարին նահանգի աղնա-
կանները նահանգական առաջնորդ ընտրված է,
ինչպէս հեռագրում են տեղական ուսու լրագրի-
ներին, ինչպէս պ. Նակաշինէ:

Հանգանակական դատարանում չարունակվում է
քննվել Ալեքսանդր Խոսրոսովի գործը: Գործը դե-
նում է բաւական դանդաղ: Ահա ութերորդ օրն
է հարցնում են վկաններին և հաղիւ դրանց կէտը
լաված լինի: Վկաների հարցմունքներով առ-
այժմ ցանկանում են գլխավորապէս պարզել հե-
տեւալ հարցերը: Թէ արդեօք բացի բնակարանի
գլխավոր մուտքից, որի բանալին Խոսրոսովի մօտ
էր, կարելի էր լինի ետեւի պատշգամբից մտնել
բնակարանը: Թէ Խոսրոսովի իրերը արժեն այնքան
որքանով նա ապահովել էր Բացի դրանց ցան-
կանում են իմանալ, թէ Խոսրոսով նախքան ինչ-
որէն ինչպէս էր անցրել, արդեօք բնակարանի ի-
րերից նախօրեք բան չէր դուրս բերված: Եւ թէ
կարելի էր բնակարանից այնպէս բան դուրսնալ
գիշերը, որ ոչքէ չիմանար: Վկաներից գլխավորե-
րը մեծ մասամբ հարցազնուել են և մինչև այժմ
այդ հարցերին որոշ պատասխան չէ տուած:
Վկաներից մի քանիսը ցոյց էին տալիս, որ հըր-
դեհի գիշերը, կէս գիշերից մի քանի ժամ անց
Խոսրոսովի բնակարանում փողոցից տեսել են մար-
դու ստուեր: Այդ բանը այժմ դժուար է ստու-
գել, քանի որ սկզբնական քննութեան ժամանակ
դրա վրա բաւական ուշադրութիւն չէ դարձրած:
Հարցերի մեծագոյն մասը առաջարկում է ինքը
մեղադրողը. երևում է, որ նա միանգամայն ու-
սումնասիրել է գործը և անգիր գիտէ սկզբնա-
կան քննութեան ժամանակ վկանների բոլոր ցոյց-
մունքները, որոնք կազմում են երկը անադին
հատորներ: Պաշտպանը միայն լրացնում է մեղա-
դրողին: Պրոկուրորը երևում է դժուարանում է
գործով: Իսկ քաղաքացիական դատի պաշտպան
Օղուկովիչ մի պատահական դեր է կատարում:
Դատի առաջին օրերին հասարակութիւն քիչ էր
յաճախում, իսկ վերջին օրերս դանդաղում գրեթէ
տեղ չը կար:

Լուում ենք, որ մասնագետ գիւղատնտես պ,
Ա. Բալանթար պետական կալուածների մինիստ-
րութեան կարգադրութեամբ շուտով պէտք է
սկսի ճանապարհորդել Արագածի կողմերը, ար-
տաւտ և զին և ի հարցը ուսումնասիրելու նպա-
տակով:

Անգլիայի Մանչեստր քաղաքից մեկ գրում են,
որ այնտեղի հայոց մատուռի մէջ հոգեհանգիստ
է կատարվել Բաֆֆի յիշատակին: Գորա հետ մի-
ասին Մանչեստրի գաղթականութիւնը մեկ փող
է ուղարկել և պատուել է մի պսակ դնել իր
կողմից հանգուցիւ վիպասանի գերեզմանի վրա:

Երեւաթի, մայիսի 24-ին, առաւօտեան 10
ժամին, Կուր գետը սկսեց սաստիկ բարձրանալ:
Ջուրը հեղհեղեղ բարձրանում էր մինչև ժամը 5-ը:
Գետի հոսանքը բերում էր գերաններ, անասնու-
ր, ջաղացներ, դանազան, քանդված իրեր, որոնց
ինչ լինելը չէր իմացվում: Թիֆլիսի Սաղ ասված
քաղաքամասը բոլորովին ծածկվեցաւ ջրով, տները
մինչև կէտը թաղված էին ջրի տակ, բնակիչները
բարձրացել էին տների կտուրների վրա, փողոց-
ներում նաւակներով էին շրջում: Ջուրը կատա-
րելապէս ծածկել էր Մուշտափից այլու գիւմացի
ամբողջ ափը իր այգիներով, ծածկել էր Նաբե-
րէճայա ասված փողոցը, այնուհետև հասել էր
մինչև այն փողոցը, որի վրայով երթնեկում է
Հաւաթար գնացող ձիաքաղաք երկաթուղին: Զիտ-
աբար այլ ևս չէր բանում: Կուր գետի ափում
գտնվող բոլոր տները կիսով չափ ծածկված էին
ջրով, փողոցի անասնուր կատարելապէս խորա-
սուզվեցան ջրի մէջ: Միջաշէնեան կամուրջի և
մօտակայ փողոցների վրա, նոյնպէս և վանքի
առաջ-եկեղեցու բակում գետի ափերում գտնվող
աների պատուհաններում ու բաղնիքներում հան-
դիսականների թիւը ահաղին էր: Ոստիկանու-
թիւնը չըջում էր Սաղում և զգուշացնում էր բը-
նակիչներին խամի մէկից քառօրդ անց, կառա-
վարապետ, ինչպէս Գոնդուկով-Կորսակով այցելեց
Սաղ ասված քաղաքամասը: Ջուրը չարունակում
էր աւելանալ: Ժամի 21-ին դարձեալ մի ջաղաց
անցկացաւ գետի հոսանքով, դիպաւ Հաւաթարի
կամուրջին և փչրվեց: Ջուրը հեղհեղեղ աւելա-
նում էր մինչև 5 ժամ, իսկ այնուհետև սկսեց
պակասել: Ասում են որ Կուր գետը ջրի այդ

բարձրութեանը 10 տարուց աւելի է որ հասած
չէր: Զրի կատաղի հոսանքի տեսարանը սարսափ
էր ներշնչում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԳԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Հայ-հռոմէականների առաջնորդ Յովհաննէս
գերապայծառ վերաւորման մասին Կ. Պոլսի
լրագիրները հաղորդում են շատ մանրամասնու-
թիւններ, և ի միջի այլոց հետեւեալը. «Այսին
27-ի գիշերը, ժամ 7-ին, մարդ մը Մշոյ հայ-հռո-
մէական առաջնորդ Յովհաննէս գերապայծառի
մասնաւոր բնակարանի պատուհանէն սանդուխով
ներս մտնելով, վերաւորիչ գործիքով մը առաջ-
նորդը տան տեղէ վերաւորեց և նոյն պատու-
հանէն փախաւ: Միջոցին պատճառաւ առաջ-
նորդը չը կրցաւ ճանչել վերաւորող մարդը, բայց
տեղիկին կառավարութիւնն եղելով ինչն անմի-
ջապէս իմանալով, կառավարիչ փաշա անձամբ
կուռ փնտռել չարագործին: Պատուհանին առջև
արեան կաթիլներ տեսնուեցան, որոց հետեւելով
խուզարկութիւնը առաջնորդեցին Մշոյ հայ վար-
ժապետին դասատու Գեորգի տան առջև, և նոյն
ինքն Գեորգ թեւն վերաւորումով միճակի մէջ
տունէն դուրս հանուեցաւ, և հարցաքննուելով,
համարձակապէս յայտարարեց թէ առաջնորդին
տան պատուհանէն գիշերայն ներս մտնելով, իւր
դանակով վերաւորած է դնա, ահագարանօք ինք-
զինը ևս թեւն վերաւորելով, և փախած է այն
համոզմամբ թէ մահացու կերպիւ կրցած է վի-
րաւորել զառաջնորդը: Գեորգ կրկնեց և հաստա-
տեց իւր այս յայտարարութիւնը:

«Թէ և ոճրին բուն չարագործներուն վրայ տե-
ղեկութիւն չը կայ տակաւին, բայց անտարակոյ
վերադրելի է այնպիսի զգացումներու և ձգտու-
ման, որը պարզ ներհրգածութեամբ մը կրնան
հասկցուիլ. և նմանապէս անեկրեպելի է, որ հո-
յոց աղբին պէս պարկեշտ և հանդարտաբար
ժողովուրդ մը զայրոյթով և նողկանօք պիտի լսէ
ոճրագործութեան լուրը:

«Անցեալները Միհրան Ամիրխան անուն հայ-
հռոմէական իւր ընկերներով յանդիման էր գիշե-
րայն հայու մը տունը մտնել ծպտեալ: Կրնայ
խորհուլի թէ Գեորգի գործին այդ դէպքին համար
վրէժխնդրութիւն մ'է: Բայց գործին եղունական
հանգամանքն և ոճրին պարզագոյններն և վերաւոր-
ողին ու վերաւորելոյն անձնական կացութիւնն
ու ընթացքը շատ կարեւոր նշանակութիւն մը
կուտան եղելութեանը:

«Արեւելի» մէջ կարդում ենք հետեւեալը.
«Հաճնոյ առաջնորդին կողմէ ուղղեալ հեռագիր
մը չնորհակալութիւն կը յայտնէ այն երկու հա-
րիւր ոսկույ նպաստին հաստի, զոր Կրկնակեան
էֆենդիներ բաշխած են վեց հազարէ աւելի կա-
ռուտելոյ: Հեռագիրն յարելով թէ թշուառութիւնը
վերջին աստիճանին հասած է այժմ ի Հաճն, թէ
անօթութիւնէ հիւանդութիւնը և մահը անպակաս
են, զթուրիւն կը խնդրէ»:

Նոյն լրագիրը ապիւ է հետեւալ ցոյցի նկա-
րագրութիւնը, որ արել են Պոլսի հայոց զպրոց-
ների աշակերտները թիւրքաց սուլթանին ներկայ
մայիս ամիս 14-ին: «Շարժութիւն օրը վեհ. Սուլթանն
հանդիմանեց կերպով: Թօփ-Գաբրիէ պաշտպանը դե-
նապած միջոցին, Ալլա. Կեղեկական վարժարա-
նի ուսանողը, ինչպէս նաև Ղաւթիոյ թաղային
վարժարանի ուսանողը, ընդամենն իբր հարիւր
իննսուն պատանիք, բարեկ հեցան Ս. Լուսառ-
րիչ եկեղեցւոյ կառաված եղող Արամեան Պան-
դուկին առջև, շիտակ ճամբուն վրայ: Կեղեկա-
կան վարժարանի սանուր, իրենց ուսանողական
համագրեման հազած, առջևի կարդը կեցած էին,
իրենց ի գլուխ ունենալով բահնայից դասն և
թիւրքի մը վրայ կանգուն, զլուռն վրա կամ-
բաւար հերմակ ժապաւէններով պնտուած վար-
դապետ անդուսէ չընդ ծրար մը, պարունակող
վեհ. Սուլթանի անուանը ձօնուած թուրքերն
երգի մը պատճնէ, ոսկեղծ տառերով և ոսկե-
նկար չըթարգմանելով զոր չարթի երկնոյ բոլոր օս-
մանեան թերթերն հրատարակեցին իւր ներածու-
թեանը: Երբ կայսերական թափօրը մօտեցաւ այդ
վայրին, ուսանողը սկսան երգել յիշեալ երգը
վեհ. Սուլթանն յոյժ զօժ մնալով այս համակա-
կան ցոյցէն, բարեհաճեցաւ ձեռքով բարեկ զհայ
ուսանողս և հրամայել, որ երգում երգին օրի-

նակն իրեն մատուցուի կայս, թիկնապահաց մին
անմիջապէս զայով, առաւ ուղերձի ծրարը: Պահ
մը վերջ յատուկ թիկնապահ մը դալով վեհ. կայ-
սեր գոհունակութիւնն յայտնեց և նորին վեհա-
փառութեան հրամանաւ ուսանողաց թիւն և դա-
սատուաց անունները նշանակելով մեկնեցաւ»:

ՓԱՐԻՉԻ ՅՈՒՅԱՀԱՆՆԻՍԻ ԱՌԻԹՈՎ

Յայտնի է, որ 1889 թ.ին փարիզում պէտք է
կայանայ համաշխարհային ցուցահանդէս, որի
համար վաղուց է արդէն պատրաստութիւններ
են տեսնվում, և որի համար Ֆրանսիան ծախ-
սում է միլիոններ: Եւրոպական պետութիւնների
մի մասը համաձայնութիւն են յայտնել մասնակ-
ցել այդ ցուցահանդիսին, իսկ պետութիւններից
մի քանիսն էլ, բուն քաղաքական տեսակետներով
և քաղաքական այժմեան լարված դրութեան շը-
նորհով, յայտնել են, որ իրանք այդ ցուցահան-
դիսին մասնակցել չեն կարող: Այսպիսի մի երե-
ւոյթ այս օրերս նկատելի եղաւ և Ունգարիա-
յում, և որը այնպիսի կերպարանք ստացաւ, որ
բաւական աղմուկների պատճառ է դարձել թէ
Ունգարիայում և թէ Ֆրանսիայում Ունգարական
մինիստր-նախագահ Տիսսա պատգամաւորների
ժողովում խօսելով այդ ցուցահանդիսին մասնակ-
ցելու կամ չը մասնակցելու մասին, յայտնեց, որ
շատ լաւ կը լինի, եթէ Ունգարացիք չը մասնակ-
ցեն այդ ցուցահանդիսին, քանի որ քաղաքական
յարաբերութիւնները այնպիսի կասկածելի կեր-
պարանք ունեն, և որ Ֆրանսիայում ժամանակ
առաւմանակ այնպիսի դրութեան զիմադրութիւն
է երևան գալիս, որ նոյն իսկ Ֆրանսիական կա-
ռավարութեան ցանկութեան հակառակ, Ունգա-
րական ազգային դրօշակը ցուցահանդիսի ժամա-
նակ կարող է ենթարկվել առնուազն վերաւոր-
անքի:

Այդ խօսքերը տարօրինակ են, քանի որ Ֆրան-
սիացիներն և Ունգարացիներն յարաբերութիւննե-
րը միշտ բարեկամական են եղած, և այդ երկու
ազգիքը հիւրասիրվում էին միմեանց մօտ բարե-
կամաբար և սիրով: Սակայն զիպոմատիական
յարաբերութիւնների վերջին ընթացքը, Տիսսայի
կարծիքով, կարող է բուրդովին ոչնչացնել երկու
ազգիքի միջև թշուառական յարաբերութիւնը
և առաջ բերել թշուառական ցոյցեր: Այդ փոփոխու-
թեան զլուստը հիմքը, ինչպէս համոզված են, ի
հարկէ աւստրիական զիպոմատիական շրջանի-
րում, գերմանական-աւստրիական դաշնակցու-
թիւնն է: Տիսսա չէ ուզում և չէ էլ կարող գու-
ցէ ծածուկ պահել, որ Աւստրիան, և նրա հետ
միասին, ի հարկէ, Ունգարիան ջերմ կերպով
թիւրքի են Գերմանիայի կողմը, և աւստրիական
քաղաքականութեան շահերը պահանջում են
նաեւ կերպով կոպած մնալ մեծ պետութիւնների
դաշնակցութեանը: Եւ կոպած մնալով այդ դաշ-
նակցութեան, Աւստրո-Ունգարիան կամայ ախա-
մայ դառնում է Ֆրանսիայի հակառակորդ, դառ-
նում է հանրապետութեան քաղաքական թշնամի,
և եթէ չը կամենար էլ, վաղը կամ միւս օրը,
երբ Եւրոպայում կը հնչի պատերազմի առաջին
փողը, և երբ Գերմանիան իր զօրքերը կը դուրս
բերի դէպի Բէլիյի հովիտը, այն ժամանակ Աւստ-
րո-Ունգարիան պէտք է հետին այդ ընթացքին....
Ուրեմն հակառակութիւն և թէ ինչու Տիսսայի ուն-
գարական այդ մեծ զիպոմատի խօսքերը՝ այս-
քան աղմուկ հանեցին: Ինչպէս հեռագիրը արդէն
լուր բերեց, Ֆրանսիական արտաքին գործերի
մինիստրը այդ մասին խօսեց պատգամաւորների
ժողովում, վիշնայի ֆրանսիական դեսպանը
արդէն այդ առիթով տեսակցութիւն ունեցաւ
Կալուսիի հետ, և նոյն իսկ Ունգարական պատ-
գամաւորների ժողովում՝ հարցապնդումներ եղան
Տիսսայի յայտնած մտքերի առիթով: Տիսսա, ի
հարկէ, իր խօսքերը յիտ չի վերցնի. նա յայտնել
է մի քաղաքական ճշմարտութիւն. թէ և գուցէ,
աւելի լաւ կը լինէր աւստրիական զիպոմատի-
րի կարծիքով, որ նա այդ բոլորը չաւէր, բայց
այդ էլ անկարելի էր, քանի որ Ունգարական մի-
նիստը նախագահը պարտաւոր էր որոշել այն
գիշերը, որ պէտք է բռնէր Ունգարիան դէպի ցու-
ցահանդէսը, քանի որ Տիսսա տեսնում էր, որ
Ունգարական արդիւնաբերողները և ամեն տեսա-
կի պարագայում զբաղվողները պատրաստվում
են մասնակցելու 1889 թ.ին մեծ ցուցահանդիսին:
Վերջապէս թէ Աւստրիայի և թէ Ունգարիայի
կառավարութիւնները չէին կարող չը յայտնել ի-

րանց հակակրօթիւնը դէպի հանրապետութեան
մայրաքաղաքում լինելի ցուցահանդէսը, քանի որ
այդպէս է պահանջում Գերմանիան, քանի որ
այդ է Ռիմարկի ցանկութիւնը, և քանի որ այդ-
պէս է թելադրում դաշնակցութիւնը.... իսկ թէ
ինչպէս կը վերաբերվի դէպի այդ բոլորը Ունգա-
րական հասարակական կարծիքը, և թէ ինչպէս
կարտայայտեն այդ հասարակական կարծիքը
պատգամաւորների ժողովում այս կամ այն պատ-
գամաւորները, — այդ կը ցոյց տայ մօտիկ ապագան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիական «Times» լրագրի մայիսի 24-ի
համարի մէջ կարդում ենք թէ լօրդ Սալսբըրի դե-
րած է Կ. Պոլսի անգլիական դեսպան Երբ Ուիլի-
ամ Ուայտին, որ սա մանրամասն, ճշգրիտ և ըն-
դարձակ տեղեկութիւններ տալ իրան թիւրքաց
հայերի վիճակի մասին, որովհետև Անգլիան չու-
տով հրաւեր պիտի կարգադրէ Ռիւրիի դաշնակցի
ստորագրող պետութիւններին միանալ իր հետ՝
թիւրքաց Հայաստանի վիճակի բարելոման և հա-
յերի խնդրի կարգադրման գործին ձեռնամուխ
լինելու:

—Բերլինից հեռագրում են, որ Պրուսիայէր չու-
տով պէտք է հրաժարական տայ:

—Աւստրիական և Ունգարական մի քանի լը-
րագիրներ, որոնց ֆանտազիան, ինչպէս երևում է,
շատ վառվուռն է, արդէն դանազան նախադու-
սակութիւններ են անում, հիմնվելով Տիսսայի խօս-
քերի վրա, որոնցով նա ուզում է ապացուցանել,
որ քաղաքական դրութիւնը շատ վտանգաւոր է,
և որ Ֆրանսիան չուտով, շատ չուտով ստիպված
կը լինի իր թշնամիների արշաւանքի դէմ դուրս
գալ: Այդ վառվուռն ֆանտազիայի տէր լրագիր-
ները և զիպոմատները երակայում են արդէն,
որ ահա փարիզը նորից չըթապաւում է օտար-
ներով, և թշնամու ուռնքերը կործանում են 89
թ.ի ցուցահանդիսի փառաւոր շինութիւնը և
պատրաստութիւնները, երևակայում են, թէ ինչ-
պէս օտար արդիւնաբերողների փոխարէն փարիզ
են գնացել օտար զօրքերը: Այդ և այդպիսի ենթա-
դրութիւններ անելու համար արդէն չափից
դուրս վառ ֆանտազիա պէտք է ունենալ:

—Վիշնայում անգլիկութիւն է ստացված, որ
Մակեդոնիայում, այլ և Ալբանիայի մի քանի կող-
մերում, ապստամբներ են առաջ եկել:

—Գիտօր Մէկէնդի խօսելով ամերիկական լը-
րագիրներից մէկի թիւթակցի հետ, յայտնել է, թէ
ինքը դեռ համոզված է, որ Ֆրիդրիխ կայսրը
կատարելապէս կարող է առողջանալ:

—Սալոնիկից եկած լուրերը ցոյց են տալիս,
որ տեղական յոյների և բուլղարների յարաբերու-
թիւնները լարվում են, յոյները բողոքում են, որ
տեղական կառավարութիւնը աւելի բուլղարների
կողմն է բռնում, թող տալով նրանց, օրինակի
համար, ուսումնարան բանալ առանց այդ մասին
առանձին թղթաւթիւն լուրերու տեղական իշ-
խանութիւնից:

—Արտասահմանի հայոց լրագիրները հաղոր-
դում են հետեւեալը. «Որովհետև վանի առաջնոր-
դական Տեղապահ Գեր. Գրիգորիս Կալուսիոյս
Ալեքսանդր Կ. Պոլս կը բերուի, Աղգալին վար-
չութիւնը որոշել է որ Բաղէշի Առաջնորդական
Տեղապահ Արթ. Բարթոլոմէոս վարդապետ Պաղ-
ճեան վան երթայ, Աղգալին Ս. Բարթոլոմէոս
վանքի վանահայր Արթ. Մեսրոպ վարդապետ Մո-
կացեան երթայ Բաղէշ. իսկ Աղգալին վանքը վա-
նի Առաջնորդարանի իրաւասութեան ենթարկուի»:
Սակայն Պոլսի «Արեւել» լրագիրը հաղորդում է,
որ Պաղճեան Բարթոլոմէոս վարդապետ մի հե-
ռագիր ուղղելով Պատրիարքարան, յայտնել է որ
անկարող է այդ պաշտօնը ստանձնել վանուած:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների
ամբողջ գործի մէջ, քանի որ վերոյիշեալ պետու-
թիւնը գոյութիւն ունի, միայն հինգ գնեւորներ
են եղել՝ Վաշինգտոն, Սիատտ, Գրանտ, Շերման
և Շերիդան: Այդ գնեւորներից միայն Շերիդա-
նին կոնգրէսը չնորհել է գնեւորաւթյունատի
աստիճան հայրենիքին մատուցած նրա առանձին
ծառայութիւնների համար: Նրա մահից յետոյ
գնեւորաւթյունատի աստիճանը չի վերցաւ ամէ-
րիկական գործում, որովհետև հանրապետութեան
հիմնական օրէնքներով գնեւորական ամենաբար-
ձր աստիճան համարվում է գնեւորաւթյունատի աս-
տիճանը:

**

11-15 (2)